ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 81-Լ

«01» 10 2025թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 78-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 21-րդ կետը, 5-րդ հոդվածի 5-րդ մասը և ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի կոմիտեի հետևյալ կազմը.

Աննա Վարդապետյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ (կոմիտեի նախագահ),

Եղիազար Ավագյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ (կոմիտեի անդամ),

Միեր Ափրիկյան - Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղար (կոմիտեի անդամ),

Լալա Բեգոյան - Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ (կոմիտեի անդամ),

Վահե Հովհաննիսյան – Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ (կոմիտեի անդամ),

Ռուբեն Առաքելյան - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ (կոմիտեի անդամ),

Դավիթ Հարությունյան - «Գլոբ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն (կոմիտեի քարտուղար):

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2024 թվականի հոկտեմբերի 16-ի N 78-Լ հրամանը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի դատախազին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ